

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևաթղթում: Պատասխանների ճևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

1

Կաթնասունների սրտի ո՞ր խոռոչներով է հոսում զարկերակային արյուն.

- 1) աջ նախասրտով և աջ փորոքով
- 2) ձախ նախասրտով և ձախ փորոքով
- 3) աջ և ձախ փորոքներով
- 4) աջ նախասրտով և ձախ փորոքով

2

Ինչո՞վ են մողեսները տարրերվում գորտերից.

- 1) ունեն արյան շրջանառության երկու շրջան
- 2) ունեն կիսաքափանցիկ բարթող երրորդ կոպ
- 3) աչքերի հետևում ունեն թմբկաթաղանք
- 4) շնչում են թոքերով

3

Անձրևորդի արտաքորության օրգանները յուրաքանչյուր հատվածում տեղավորված մեկ զույգ ձագարաձև խողովակներ են, որոնք

- 1) սեռական ծորաններին միացած բացվում են դուրս
- 2) լայն բացվածքով գտնվում են մարմնի խոռոչում, իսկ նեղը հարևան հատվածից բացվում է դուրս
- 3) մի ծայրով փակ են, իսկ հիմքերով բացվում են աղիքի մեջ
- 4) մի ծայրով հաղորդակցվում են մարմնի խոռոչի հետ, իսկ մյուսով բացվում են աղիքի մեջ

4

Բույսերի ո՞ր դասին է պատկանում եզան լեզուն, և ինչպիսի՞ն է նրա տերևների ջղավորությունը.

- 1) երկշարժիլավորների, տերևներն ցանցածիղ են
- 2) երկշարժիլավորների, տերևներն աղեղնածիղ են
- 3) միաշաքիլավորների, տերևներն զուգահեռածիղ են
- 4) միաշաքիլավորների, տերևներն աղեղնածիղ են

5

Պլանարիայի բազմացման օրգանները կազմված են՝

- 1) երկու ձվարաններից և բազմաթիվ սերմնարաններից
- 2) երկու ձվարաններից և մեկ սերմնարանից
- 3) երկու սերմնարաններից և բազմաթիվ ձվարաններից
- 4) բազմաթիվ սերմնարաններից և մեկ ձվարանից

6

Թռչունների ո՞ր մկաններն են ամենազարգացածը, և քոիչքի ժամանակ որո՞նց է պատկանում թևերի իջեցման հիմնական դերը.

- 1) ենթանրակային
- 2) բազուկների փոքր
- 3) միջկողային
- 4) կրծքային մեծ

7

Ինչպե՞ս են հեռացվում սննդի չմարսված մնացորդները հիդրայի մարմնից.

- 1) կծկվող վակուոլով
- 2) բերանային անցքով
- 3) հետանցքով
- 4) մարմնի ամբողջ մակերևոյթով

8

Որտե՞ղ է սկսվում մարսողության գործընթացը մարդու օրգանիզմում.

- 1) ստամոքսում
- 2) բարակ աղիում
- 3) բերանի խոռոչում
- 4) տասներկումատնյա աղիում

9

Ո՞ր վիտամինն է ազդում ածխաջրերի փոխանակության, նյարդային և սիրտ-անոթային համակարգերի գործունեության վրա.

- 1) B_1
- 2) D
- 3) C
- 4) A

10

Ի՞նչը բնորոշ չէ մարդու շարակցական հյուսվածքին.

- 1) մտնում է բոլոր ներքին օրգանների կազմի մեջ
- 2) դանդաղ է վերականգնվում
- 3) կազմում է ենթամաշկային ճարպային շերտը
- 4) կազմված է նոսր դասավորված բջիջներից

11

Ի՞նչն է բնորոշ մարդու քրոմֆոցիտներին.

- 1) կորիզ չունեն, առաջանում են լյարդում և կարմիր ոսկրածուծում, քայքայվում են ավշային հանգույցներում
- 2) կորիզ չունեն, առաջանում են կարմիր ոսկրածուծում, քայքայվում են փայծաղում
- 3) կորիզ չունեն, պարունակում են հենոգլոբին, մասնակցում են արյան մակարդմանը
- 4) ունեն մեկ կորիզ, առաջանում են կարմիր ոսկրածուծում, քայքայվում են փայծաղում

12

Ո՞ր պնդումը չի համապատասխանում մարդու միջանկյալ ուղեղին.

- 1) տեսաթմբի զգայարանների ենթակենևային կենտրոնները կապված են մեծ կիսագնդերի տարբեր բաժինների հետ
- 2) ենթատեսաթմբում գտնվում են բարձրագույն վեգետատիվ կենտրոնները
- 3) գտնվում է կամրջի և միջին ուղեղի միջև
- 4) հիմնական բաժիններից են տեսաթումբը և ենթատեսաթումբը

13

Ի՞նչն է փոխում մարդու ակնաբյուրեղի կորությունը.

- 1) ապակենման մարմինը
- 2) քարթիչավոր մարմինը
- 3) ակնագունդը շարժող մկանը
- 4) բիբով անցնող լույսի ճառագայթը

14

Մարդու զանգի ո՞ր ոսկորը չի մտնում դիմային քաժնի կազմի մեջ.

- 1) քբուկրը
- 2) ստորին ծնոտը
- 3) այտոսկրը
- 4) ճակատոսկրը

15

Նշվածներից որո՞նք են գտնվում մարդու մաշկի վերնամաշկում.

- 1) ճարպագեղձերը
- 2) քրտնագեղձերը
- 3) շոշափական ընկալիչները
- 4) գունանյութ պարունակող բջիջները

16

Ի՞նչ հիվանդություն է զարգանում մարդու օրգանիզմում թիրօքսինի անբավարարության դեպքում.

- 1) բազելովյան
- 2) զաճաճություն
- 3) թզուկություն
- 4) գիգանտիզմ

17

Էռևարիտունների ոիբռունների մեծ և փոքր մասնիկների (ենթամիավորների) ձևավորումը տեղի է ունենում՝

- 1) բջջային կենտրոնում
- 2) էնդոպլազմային ցանցի խուղակներում
- 3) կորիզակում
- 4) Գոլջիի ապարատում

18

Ո՞ր միացությունների բաղադրության մեջ է մտնում ոիբռով.

- 1) ԴՆԹ-ի և ՌՆԹ-ի
- 2) սպիտակուցների և վիտամինների
- 3) ԱՇՖ-ի և ՌՆԹ-ի
- 4) ԴՆԹ-ի և պոլիսախարիդների

19

Ի՞նչ է նշանակում գենետիկական կողի ավելցուկայնություն.

- 1) բոլոր օրգանիզմներում նույն եռյակները գաղտնագրում են նույն ամինաթթուն
- 2) յուրաքանչյուր նուկլեոտիդ կարող է լինել միայն մեկ որոշակի եռյակի կազմում
- 3) գեների միջև կան «ընդհատումներ»
- 4) միևնույն ամինաթթուն կարող է գաղտնագրվել մեկից ավելի եռյակներով

20

Թվարկվածներից ո՞ր միացություններն են պոլիսախարիդներ.

- 1) օսլան, գալակտոզը, սախարոզը
- 2) գլիկոգենը, լեցիտինը, լակտոզը
- 3) հեպարինը, ցելյուլոզը, գլիկոգենը
- 4) ցելյուլոզը, գլյուկոզը, գլիկոգենը

21

Պլաստիկ փոխանակության օրինակներ են.

- 1) շնչառությունը և սպիտակուցի կենսասինթեզը
- 2) քեմոսինթեզը և ֆուտոսինթեզը
- 3) սպիտակուցի կենսասինթեզը և սպիրտային խմորումը
- 4) գլիկոլիզը և նիտրիֆիկացումը

22

Նշվածներից որը՝ չի կատարում պաշտպանական գործառույթ.

- 1) իմունոգլոբուլինը
- 2) հակածինը
- 3) ինտերֆերոնը
- 4) հակամարմինը

23

Տրանսլյացիան.

- 1) ժառանգական տեղեկատվության փոխանցումն է ի-ՈՒԹ-ից ո-ՈՒԹ-ի մոլեկուլին
- 2) ի-ՈՒԹ-ի մատրիցայի հիման վրա ոիքոսումներում սպիտակուցի պոլիպեպտիդային շղթայի սինթեզի գործընթացն է
- 3) ԴՆԹ-ի մոլեկուլից ժառանգական տեղեկատվության փոխանցումն է ի-ՈՒԹ-ին
- 4) բջջակորիգում ի-ՈՒԹ-ի մոլեկուլի սինթեզն է

24

Ի՞նչ արդյունք է ստացվում երկու երկինտերոզիզոտ առանձնյակների խաչասերման արդյունքում՝ երկու ալելով էլ ոչ լրիվ որմինանալության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 16 ֆենոտիպային և 9 գենոտիպային ձևեր
- 2) 9 ֆենոտիպային և 9 գենոտիպային ձևեր
- 3) 16 ֆենոտիպային և 16 գենոտիպային ձևեր
- 4) 9 ֆենոտիպային և 16 գենոտիպային ձևեր

25

Ի՞նչ արդյունք է ստացվում երկու հետերոզիգոտների մոնոհիբրիդ խաչասերման արդյունքում.

- 1) առաջանում են երկու գենոտիպային խմբեր՝ լրիվ դոմինանտուրյան դեպքում
- 2) առաջանում են երեք գենոտիպային խմբեր՝ անկախ դոմինանտուրյան բնույթից
- 3) առաջանում են չորս գենոտիպային խմբեր՝ ոչ լրիվ դոմինանտուրյան դեպքում
- 4) առաջանում են երկու գենոտիպային խմբեր՝ ոչ լրիվ դոմինանտուրյան դեպքում

26

Ինչե՞րն են ձևավորվում սերմնարանների աճման գոտում.

- 1) առաջին կարգի սպերմատոցիտները
- 2) երկրորդ կարգի սպերմատոցիտները
- 3) սպերմատիդները
- 4) սպերմատոզոնիումները

27

Փոփոխականության ո՞ր ձևն է ոչ ժառանգական.

- 1) ֆենոտիպային փոփոխականությունը
- 2) համակցական փոփոխականությունը
- 3) մուտացիոն փոփոխականությունը
- 4) կորիզային փոփոխականությունը

28

Ո՞ր դեպքում է տեղի ունենում շղթայակցված ժառանգման երևոյթը.

- 1) հետազոտվող հատկանիշների պատասխանատու գեները գտնվում են նույն գամետի տարրեր քրոմոսոմներում
- 2) հետազոտվող հատկանիշների պատասխանատու գեները գտնվում են երկու հոմոլոգ քրոմոսոմներում
- 3) հետազոտվող հատկանիշների պատասխանատու գեները գտնվում են միևնույն քրոմոսոմում
- 4) հետազոտվող հատկանիշների պատասխանատու գեները գտնվում են միայն սեռական քրոմոսոմների գույգում

29

Ինչե՞րն են առաջանում էնտոդերմից օնտոգենեզի ընթացքում.

- 1) սեռական գեղձերը
- 2) ոսկրային հյուսվածքները
- 3) մաշկի էպիթելի
- 4) աղիքի էպիթելի

30

Ո՞ր կենդանիները չունեն արական հոմոզամետուրյուն.

- 1) պոչավոր երկկենցաղները
- 2) դրոզնիլլ
- 3) բոչունները
- 4) թիթեռները

31

Որո՞նք պրոդուցենտներ չեն.

- 1) կանաչ բույսերը
- 2) երկաքարակտերիաները
- 3) կապտականաչ ջրիմուռները
- 4) սնկերը

32

Ո՞ր բնութագիրն է համապատասխանում կոմենսալիզմին.

- 1) փոխհարաբերվող տեսակներից ոչ մեկը օգուտ չի ստանում
- 2) փոխհարաբերվող երկու տեսակն էլ ստանում են օգուտ և հանդիսանում է դրանց գոյության համար անհրաժեշտ պայման
- 3) փոխհարաբերվող երկու տեսակներն են ստանում օգուտ, սակայն դրանց համատեղ գոյությունը յուրաքանչյուր տեսակի համար անհրաժեշտ պայման չէ
- 4) փոխազդող երկու տեսակներից միայն մեկն է օգուտ ստանում

33

Ինչի՞ արդյունքում կարող է տեղի ունենալ նոր տեսակների առաջացում նախկին արեալի ներսում նույն տեսակի պոպուլյացիաներից.

- 1) էկոլոգիական մեկուսացման
- 2) մոդիֆիկացիոն փոփոխականության
- 3) կոնվերգենցիայի
- 4) աշխարհագրական մեկուսացման

34

Կենդանի նյութի ո՞ր ֆունկցիայի հետ է կապված ծծմբի և երկարի հաճքերի առաջացումը.

- 1) միջավայր գոյացնող
- 2) էներգիական
- 3) կուտակող
- 4) դեստրուկտիվ

35

Ինչի՞ օրինակ է իշախառանչ արջուկի և խլուրդի առջևի վերջույթների նմանությունը.

- 1) տարամիտման
- 2) կոնվերգենցիայի
- 3) ատավիզմի
- 4) ռուդիմենտի

36

Ի՞նչ է միմիկրիան.

- 1) միջավայրի առարկաներին նմանվելու հարմարվածություն
- 2) կենդանիների աշքի ընկնող վառ գունավորումն է
- 3) քիչ պաշտպանված տեսակի մարմնի ձևի գունավորման ընդօրինակումն է պաշտպանված տեսակին
- 4) ներտեսակային գոյության կովի ձև

- (37-38) Ծագանակագույն աչքերով և աջլիկ ամուսիններից ծնվեց երկու երեխա. մեկը՝ շագանակագույն աչքերով ձախլիկ, մյուսը՝ երկնագույն աչքերով աջլիկ։ Ծագանակագույն աչքերը և աջլիկությունը պայմանավորող գենները դոմինանտում են համապատասխանաբար երկնագույն աչքեր և ձախլիկություն որոշող գենների նկատմամբ և ժառանգվում են որպես առաստանային չշղթայակցված հատկանիշներ։

37

Ինչպիսի՞ հնարավոր գենոտիպ ունի ամուսինը.

- 1) aaBB
- 2) AaBb
- 3) aaBb
- 4) AABb

38

Գտնել այդ ընտանիքում երկնագույն աչքերով ձախլիկ երեխա ծնվելու հավանականությունը.

- 1) 1/2
- 2) 1/4
- 3) 1/8
- 4) 1/16

39

Գլյուկոզի ճեղքման պրոցեսում օրգանիզմում օգտագործվել է 42 մոլ O_2 , և առաջացել՝ 360 մոլ H_2O : ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա։ Քանի՞ կՋոուլ օգտակար էներգիա է կուտակվել ԱԵՖ-ի ձևով այդ ընթացքում.

- 1) 9960
- 2) 18200
- 3) 9540
- 4) 7980

40

Ի-ՌՆԹ-ի մոլեկուլում աղենինային և ուրացիլային նուկլեոտիդները միասին կազմում են 60%: ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածի երկարությունը, որից ստացվել է տվյալ ի-ՌՆԹ-ն՝ $2,38 \cdot 10^{-6}$ մ է, իսկ մեկ նուկլեոտիդի երկարությունը 0,34 նանոմետր: Գտնել գուանինային նուկլեոտիդի քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այն հատվածում, որից ստացվել է տվյալ ի-ՌՆԹ-ն.

- 1) 4200
- 2) 7000
- 3) 1400
- 4) 2800

41

Ո՞ր գործընթացը (նշված է ձախ մասում) ֆոտոսինթեզի ո՞ր փուլին է համապատասխանում (նշված է աջ մասում): Նշել համապատասխանություններն ըստ հերթականության:

Գործընթաց

Ֆոտոսինթեզի փուլ

- | | |
|-----------------------------------|-------------|
| A. ատոմային ջրածնի առաջացում | 1. լուսային |
| B. մոլեկուլային թթվածնի առաջացում | 2. մթնային |
| C. ածխաջրերի սինթեզ | |
| D. քլորոֆիլի մոլեկուլի իոնացում | |
| E. ջրի քայքայում | |
| F. ԱԵՖ-ի սինթեզ | |

42

Օրգանիզմների բազմացման ո՞ր եղանակը (նշված է ձախ սյունակում) բազմացման ո՞ր ձևին է (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության:

Բազմացման եղանակ

- A. բազմացում կոճղարմատներով
- B. բազմացում կտրոններով
- C. նախակենդանիների բազմակի կիսում
- D. կուսածնություն
- E. տափակ որդերի, որոշ ջրիմուների մարմնի բաժանում մի քանի մասի
- F. բազմացում սոխուկներով
- G. խմորասնկերի մարմնի արտափրկած մասի անջատում

Բազմացման ձև

- 1. վեգետատիվ բազմացում
- 2. շիզոգնոնիա
- 3. բողբոջում
- 4. սեռական բազմացում
- 5. ֆրազմենտացիա

43

Չափանիշների ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) տեսակի ո՞ր չափանիշին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանությունը.

Չափանիշի բնութագիր

Տեսակի չափանիշ

- A. տեսակը գոյատևում է արտաքին միջավայրի որոշակի պայմաններում
- B. յուրաքանչյուր տեսակ զբաղեցնում է խիստ որոշակի արեալ
- C. նույն տեսակի առանձնյակների ԴՆԹ-ն կոդավորում է միանման սպիտակուցներ
- D. առանձնյակներն ունեն ներքին և արտաքին կառուցվածքների նմանություն
- E. քրոմոսոմների քանակի, ձևի, չափսերի նմանություն
- F. առանձնյակների կենսագործունեության գործընթացների նմանություն

1. աշխարհագրական
2. գենետիկական
3. ֆիզիոլոգիական
4. ձևաբանական
5. էկոլոգիական
6. կենսաքիմիական

44

Գլխուղեղի կեղևի ո՞ր գոտին (նշված է ձախ սյունակում) կեղևի ո՞ր մասին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանության.

Կեղևի գոտի

- A. լսողական
- B. խոսքի
- C. հոտառական
- D. ճաշակելիքի
- E. շարժողական
- F. տեսողական
- G. մաշկամկանային զգայության

Կեղևի մաս

1. ճակատային բիլք
2. կենտրոնական ակոսի ստորին մաս
3. ծոծրակային բիլք
4. քունքային բիլք
5. քունքային բլթի ներքին մաս
6. գագաթային բիլք

45

Ի՞նչ համապատասխանություն կա մարդու երիկամի կառուցվածքային տարրի (նշված է աջ սյունակում) և գործընթացի (նշված է ձախ սյունակում) միջև: Նշել ճիշտ համապատասխանությունները.

Գործընթաց

- A. արյունատար անորի պատի վրա արյան ճնշման ած
- B. առաջնային մեզի անցում ոլորուն խողովակ
- C. մեզի տեղափոխում երիկամի ավագան
- D. պլազմայի բաղադրիչ մասերի ֆիլտրում մազանոթների պատով
- E. օրգանիզմին անհրաժեշտ նյութերի հետադարձ ներծծում

Երիկամի կառուցվածքային տարր

1. նեֆրոնի պատիճ
2. նեֆրոնի կծիկ
3. հավաքող խողովակ
4. ոլորուն և ծնկաձև խողովակներ

46

Ի՞նչ հաջորդականությամբ են ընթանում քջի կենսական ցիկլի գործընթացները.

1. քրոմոսոմների ազատ դասավորում ցիտոպլազմայում՝ իլիկի հասարակածային հարթությունում, և կենտրոնական մասում իլիկի թելիկի ամրացում յուրաքանչյուր քրոմոսոմին
2. բաժանման իլիկի թելիկների առաջացում
3. քրոմատիդների տարամիտում դեպի քջի հակաղիք քնեռներ
4. ցենտրիուլների հեռացում դեպի քջի հակաղիք քնեռներ
5. ցիտոպլազմայի բաժանում և երկու դուստր քջիների ձևավորում
6. քջի քնեռներում կորիզաքաղանքի և կորիզակի ձևավորում
7. օրգանոիդների բվի ավելացում և ԴՆԹ-ի սինթեզ
8. կորիզաքաղանքի լուծում

47

Ի՞նչ հաջորդականությամբ է առաջանում և իրականանում քրազատության պայմանական ռեֆլեքսը լույսի նկատմամբ Ի.Պ. Պավլովի փորձերում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. քրազատության կենտրոնի դրդում
2. լուսային ազդակի ներգործություն
3. կեղևի սննդառական և տեսողական կենտրոնների միջև ժամանակավոր կապի առաջացում
4. լուսային ազդակի հետ զուգակցված կերակրում
5. քրազատություն
6. անտարբեր և ոչ պայմանական զրգությունների զուգակցված ներգործության բազմակի կրկնություններ

48

Ի՞նչ հաջորդականությամբ է փոխանցվում ձայնային ալիքը և նյարդային ազդակը մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ձվաձև պատուհանի թաղանթ
2. լսողական ընկալիչ
3. հիմնային թաղանթ
4. թմբկաքաղանք
5. լսողական նյարդ
6. տեսաթումք
7. մուրճ
8. մեծ կիսագնդերի կեղև

49

Ինչպիսի՞ն է քրվածնի ուղին մարդու օրգանիզմում՝ սկսած ներշնչման պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. առրտա
2. կոկորդ
3. կմախքային մկանի միջբջջային նյութ
4. միտոքոնդրիումի ներքին խոռոչ
5. քոքարուշ
6. մկանաթելի ցիտոպլազմա
7. մազանոք
8. քրոնիս

50

Ածխածնի շրջապտույտում ինչպիսի՞ն է գործընթացների հաջորդականությունը՝ սկսած անկենդան բնությունից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. գլիկոզենի առաջացում կենդանական բջիջներում
2. գլյուկոզի առաջացում բուսական բջիջներում
3. գլյուկոզի առաջացում կենդանական բջիջներում մարսողության ընթացքում
4. ածխաթթու գազի կապում ֆոտոսինթեզի ընթացքում
5. օւլայի առաջացում բուսական բջիջներում
6. ածխաթթու գազի առաջացում կենդանու շնչառության ընթացքում

51

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ֆոտոսինթեզի մթնային փուլում քլորոֆիլի մոլեկուլը ֆիքսվում է ռիբոլոզարի-ֆուֆատ-կարբօքսիլազ ֆերմենտի միջոցով, որի արդյունքում առաջանում է վեց ածխածնային միացություն
2. պլաստիկ փոխանակության ռեակցիաներն ընթանում են միայն երիտասարդ բջիջներում
3. մեկ ի-ՈՒՆՁ-ի հետ միացած մի քանի ռիբոսոմները առաջացնում են պոլիռիբոսոմ
4. քլորոպլաստների գրանները մասնակցում են ֆոտոսինթեզի մթնային փուլի գործընթացներին
5. պլազմային թաղանթով չեն անցնում ճարպալույժ միացությունները
6. ջրի հետ փոխազդեցության արդյունքում ԱԵՖ-ի ածխաջրի և ֆուֆորական թթվի միջև առկա կապը ճեղքվում է, և ԱԵՖ-ը ձևափոխվում է ԱԿՖ-ի
7. կորիզավոր բջիջներում գլիկոլիզի արդյունքում առաջացած պիրոխաղողաթթուն թթվածնի բավարար քանակության պայմաններում անցնում է միտոքոնդրիումներ և ենթարկվում հետագա ճեղքման, որի արդյունքում առաջանում է ացետիլ-կոֆերմենտ A

52

Ո՞ր պնդումն է ճիշտ նարդու ենթատամոքսային գեղձի համար: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ենթատամոքսահյութը գորշ դեղնավուն է, պարունակում է արյան մեջ գլյուկոզի հաստատուն քանակի պահպանումն ապահովող հորմոններ
2. ենթատամոքսային գեղձի հյութազատության նյարդային կարգավորմանը մասնակցում են ողնուղեղի կրծքային հատվածի գորշ նյութի կողմնային եղջյուրների նեյրոնները
3. ենթատամոքսային գեղձի բջիջները մեծ քանակությամբ լորձ են արտադրում
4. ենթարկվում է հումորալ կարգավորման
5. տեղակայված է ստամոքսի հետևում՝ գոտկային երրորդ ողի մակարդակում
6. ենթատամոքսային գեղձի ծորանը բացվում է բարակ աղիի սկզբնամասում
7. ենթատամոքսահյութը պարունակում է բոլոր սննդանյութերը ճեղքող ֆերմենտներ
8. ենթատամոքսային գեղձը կազմված է գլխիկից, վգիկից և փայծաղին հարող պոչից

53

Ո՞ր պնդումներն են ճիշտ մարդու երկարավուն ուղեղի համար: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. Երկարավուն ուղեղում առաջանում են գրգիռներ, որոնք հաղորդվում են միջկողային մկաններին և ստոծանուն
2. Երկարավուն ուղեղում են գտնվում վեգետատիվ նյարդային համակարգի պարա-սիմպաթիկ ենթարաժնի կենտրոնները
3. Երկարավուն ուղեղի մակերևույթը պատված է գորշ նյութով
4. Երկարավուն ուղեղը ապահովում է կմախքի մկանների լարվածությունը
5. Երկարավուն ուղեղը ապահովում է կապը զիսուղեղի թաժինների և ողնուղեղի միջև
6. Երկարավուն ուղեղը կարգավորում է արցունքազատման, կոպերի թարթման իրականացումը
7. Երկարավուն ուղեղն ապահովում է ճշգրիտ շարժումների իրականացումը

54

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. բակտերիաների մեծ մասը, վիրուսները և կապտականաչ ջրիմուտները նախա-կորիզավորներ են
2. սապրոտրոֆ բակտերիաներն ունեն բակտերիոֆլորոֆիլ, որի շնորհիվ ֆոտոսինթեզ են կատարում
3. անբարենպաստ պայմաններում բակտերիաներն առաջացնում են սպորներ
4. բակտերիաները մարդու աղիներում վերամշակում են սնունդը, օրգանիզմին մատակարարում են K և B վիտամիններ
5. բակտերիաները բազմանում են միայն բջջի բաժանման եղանակով՝ մեյոզով
6. բակտերիաների բջջները չունեն միտոքոնդրիումներ, կորիզանյութ, էնդոպլազ-մային ցանց, Գոլցիի ապարատ

55

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. բարենպաստ պայմաններում ինֆուզորիան բազմանում է սեռական եղանակով՝ կոնյուգացիայով
2. անբարենպաստ պայմաններում ինֆուզորիան բազմանում է անսեռ եղանակով՝ լայնակի կիսմամբ
3. ինֆուզորիաների կոնյուգացիայի ընթացքում տեղի է ունենում ժառանգական նյութի փոխանակում
4. սննդի շմարսված պինդ մնացորդներն ինֆուզորիայի մարմնից դուրս են գալիս կծկվող վակուումի միջոցով
5. ինֆուզորիաներն ունեն մեկ մեծ և մեկ փոքր կորիզ
6. ինֆուզորիաներին բնորոշ չէ գրգռականությունը

56

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. մուտացիաները տարբերակվում են ըստ փոփոխվող ժառանգական նյութի կազմավորվածության մակարդակի
2. հապլոիդիան քրոմոսոմների քվաքանակի կրկնակի մեծացումն է
3. սոմատիկ մուտացիաները չեն փոխանցվում սերնդին
4. պոլիպլոիդիան հանդիպում է հիմնականում բույսերում
5. անեռապլոիդիան քրոմոսոմների հապլոիդ քանակի բազմապատիկ փոփոխումն է
6. Դառնարկումը գենոմային մուտացիաները միշտ դրսնորվում են ֆենոտիպորեն
7. ռեցեսիվ գենային մուտացիաները միշտ դրսնորվում են ֆենոտիպորեն

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.

1. մազանոքներում արյան դանդաղ հոսքը նպաստում է մազանոքների պատի թափանցելիությանը
2. արյունը աղիներից դեպի լյարդ հոսում է լյարդի երակով
3. արյան հոսքի արագությունը մազանոքներում մոտ 1000 անգամ փոքր է, քան առրտայում
4. արյունը աղիներից դեպի լյարդ հոսում է լյարդի դրներակով
5. երակներում արյան հոսքի արագությունն աստիճանաբար աճում է
6. երակներով արյան միակողմանի հոսքին նպաստում են նրանցում գտնվող փեղկավոր փականները
7. մազանոքների լուսանցքի գումարային մակերեսը 500-800 անգամ գերազանցում է առրտայի լուսանցքի մակերեսը

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. հակածինները մարդու և կենդանիների իմունային համակարգի պաշտպանական ֆունկցիա իրականացնող սպիտակուցներն են, որոնք պաշտպանում են օրգանիզմը վիրուսներից, բակտերիաներից և տարբեր օտարածին մասնիկներից
2. պոլիմերները օրգանական միացություններ են, ունեն մեծ չափսեր, որոնք պայմանավորված են դրանց կազմում տարբեր կառույցների կրկնությամբ
3. ջուրն օժտված է ջերմահաղորդականությամբ և ջերմունակությամբ, ինչի շնորհիվ այն ունի մեծ նշանակություն օրգանիզմում ջերմային հավասարակշռության պահպանման գործում
4. շրջակա միջավայրում կալիումի իոնների պարունակությունը ավելին է, քան կենդանի քջիջներում, իսկ նատրիումի իոնների պարունակությունը կենդանի քջիջներում է ավելին, քան շրջակա միջավայրում
5. կենդանի քջիջներում հանդիպող քիմիական տարրերից ամենամեծաքանակը թթվածնի պարունակությունն է
6. ԱԵՖ-ի կազմության մեջ մտնում են աղենինային ազոտական հիմքի մնացորդը, ոիբող ածխաջուրը և ֆոսֆորական թթվի երեք մնացորդ
7. եթե ի-ՈՒՆԹ-ի մոլեկուլի հատվածում ուրացիլային նուկլեոտիդները կազմում են 20 %, այս աղենինային նուկլեոտիդների քանակը անպայման 20 % է ԴՆԹ-ի մոլեկուլում, որից ստացվել է այդ ի-ՈՒՆԹ-ն
8. ԴՆԹ-ի կազմում հանդիպող պուրինային ազոտական հիմքերն են աղենինը և գուանինը

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. դալտոնիզմ առավել հաճախ հանդիպում է տղամարդկանց մոտ, ինչը բացատրվում է նրանով, որ տվյալ հատկանիշը պայմանավորող գենը գտնվում է Յ քրոմոսոմում
2. վերլուծող է կոչվում անհայտ գենոտիպ ունեցող առանձնյակի խաչասերումն ըստ ռեցեսիվ գենի հոմոզիգոտ առանձնյակի հետ
3. ցիտոպլազմային ժառանգականությունը կապված է քլորոպլաստների և միտո-քրոմոֆիլումների ԴՆԹ-ի հետ
4. դրոգոֆիլի աչքի գույնն առատումային հատկանիշ է, և այն պայմանավորող գենը գտնվում է X քրոմոսոմում
5. հիպերտրիխոզը առատումային քրոմոսոմով ժառանգվող հատկանիշ է
6. բրախիդակտիլիան պայմանավորված է գենոտիպում մեկ ռեցեսիվ գենի առկայությամբ, որը պայմանավորում է կմախքի զարգացման խանգարումներ և հոմոզիգոտների մոտ հանգեցնում է մահվան
7. ԴՆԹ-ի մոլեկուլում A-ն կապված է Թ-ի հետ 3, իսկ G-ն Ց-ի հետ՝ 2 ջրածնային կապերով, որոնք նպաստում են ժառանգական տեղեկատվության պահպանմանը

- (60-61) Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու մարմնից ջերմաճառագայթման ճանապարհով հեռացվել է 12495 կՋ էներգիա: Հայտնի է, որ մաշկի մակերևույթից ջերմաճառագայթման միջոցով հեռացվում է ավելցուկային ջերմային էներգիայի 60%-ը, գոլորշիացման միջոցով՝ 20%-ը, ջերմահաղորդման միջոցով՝ 15%-ը: Հաշվի առնել, որ 1 գ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՋ էներգիա:

Քանի՞ զրամ քրտինք կգոլորշիացվեր մաշկի մակերևույթից ֆիզիկական աշխատանքի ընթացքում, եթե քրտնարտադրության վրա ծախսվեր նաև ջերմահաղորդմամբ հեռացվող էներգիան:

Որքա՞ն էներգիա է հեռացել (Զ-ով) մարմնի 1 սմ² մակերեսից գոլորշիացման միջոցով, եթե մաշկի մակերեսը 1,7 ս² է:

62

16-ժամյա լուսային օրվա պայմաններում 40 м^2 տերևային մակերևույթ ունեցող ծառի կողմից 30 օրուն քանի^o լիտր թթվածին է, արտադրվել, եթե 1 մոլ գազը գրաղեցնում է 22,4 լիտր ծավալ:

- (63-64) Արյան III-րդ խումբ ունեցող դալտոնիկ տղամարդն ամուսնացակ արյան IV-րդ խումբ և բնականոն տեսողություն ունեցող կնոջ հետ: Նրանց առաջին երեխան տղա էր, ուներ արյան II-րդ խումբ և դալտոնիկ էր:

63

Որքա^oն է արյան IV-րդ խումբ ունեցող երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

64

Որքա^oն է դալտոնիկ տղա ծնվելու հավանականությունը (%-ով):

- (65-66) Էկոհամակարգում ընդգրկված են սննդային չորս մակարդակներ՝ պրոդուցենտներ – I կարգի կոնսումենտներ – II կարգի կոնսումենտներ – III կարգի կոնսումենտներ: III կարգի կոնսումենտների կուտակած գումարային էներգիան 1250 կՎ է:

65

III կարգի քանի^o կոնսումենտ կարող է սնվել տվյալ էկոհամակարգում, եթե մեկ առանձնյակի զանգվածը 0,5 գ է և 1 գ զանգվածում կուտակվում է 50 կՎ էներգիա:

66

Քանի միլիոն կՎ էներգիա է անցել էկոհամակարգ, եթե համակարգի համար էներգիայի միակ աղբյուր է հանդիսանում արեգակնային ճառագայթումը և ֆոտոսինթեզի արդյունավետությունը 1,6 % է: Յուրաքանչյուր սննդային մակարդակում կուտակվում է օգտագործված սննդի էներգիայի 12,5%-ը:

- (67-68) Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու շնչառական շարժումներն արագացել են 1,5 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,4 անգամ և օրգանիզմում յուրացվող թթվածնի ծավալն աճել է 25%-ով: Մարդու արթուն է եղել 14 ժամ, ծանր ֆիզիկական աշխատանք է կատարել 5 ժամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում:

67

Քննած վիճակում քանի՞ լիսոր ածխաթթու գագ է մարդու արտաշնչել:

68

Մեկ օրվա ընթացքում քանի՞ լիսոր թթվածին է օգտագործվել օրգանիզմում:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. ողնուղեղի կրծքային բաժնի հատվածների կողմնային եղջյուրներից հաղորդվող ազդակները խթանում են ստամոքսի և սրտի աշխատանքը
2. պարասիմպաթիկ նյարդաթելերով գլխուղեղից հաղորդվող նյարդային ազդակները նեղացնում են բիբը
3. սիմպաթիկ նյարդաթելերով ողնուղեղի կողմնային եղջյուրներից հաղորդվող ազդակներն ուժեղացնում են ջրի հետադարձ ներծծումն երիկամներում և նվազեցնում մեզի քանակը
4. ողնուղեղի սրբանային բաժնի հատվածների կողմնային եղջյուրներում առաջացող նյարդային ազդակները հրահրում են միզապարկի մկանների կծկում
5. ողնուղեղի գորշ նյութի առջևի եղջյուրներից հեռացող նյարդաթելերն ավելի քարակ են, քան կողմնային եղջյուրներից հեռացողները
6. պարասիմպաթիկ նյարդային համակարգի նախահանգուցային նյարդաթելերն ավելի երկար են, քան հետհանգուցայինները

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. կենդանիների ձվարջիջն ունի երկու՝ անիմալ և վեգետատիվ, որն արտահայտվում է սպերմատոզոֆիդի ներբափանցման հատվածով
2. ձվարջիջ բևեռայնությունը դրսնորվում է ցիտոպլազմային ներառուկների տեղադրվածությամբ
3. տրոհումն ամբողջական է և հավասարաչափ, եթե դեղնուցի քանակը ձվարջում շատ է և հավասարաչափ է բաշխված
4. նշտարիկի ձվարջում դեղնուցը քիչ է, ուստի այն տրոհվում է ամբողջապես
5. բլաստոմների առաջացումը տեղի է ունենում մեյոզի և միտոզի հերբափոխությամբ
6. կաթնասունների ձվարջում դեղնուցը քիչ է, ուստի դրա տրոհումն ամբողջական է, բայց առաջացած բլաստոմների չափերն անհավասար են